

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Ա. Ս. ԽԱՌԱՏՅԱՆ

Լոնդոնի «Զեդ բուքս» հրատարակչությունը 1985 թ. լույս է ընծայել «Լոնդոնյան հանցագործությունը. Հայերի ցեղասպանությունը. Մշտական ժողովրդական դատարան» (A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent People's Tribunal. London, 1985) վերնագիրը կրող միհատորյակը, որը պարունակում է միջազգային հասարակական կազմակերպություն հանդիսացող Մշտական ժողովրդական դատարանի՝ արևմտահայերի ցեղասպանությունը նվիրված նիստերի նյութերը: Այդ նիստերը տեղի ունեցան Փարիզում (Սորբոնի համալսարանում), 1984 թ. ապրիլի 13—16-ը: Հատորը թարգմանված է նյութերի բնագրերի ֆրանսերեն հրատարակչությունից (Փարիզ, Ֆլամարիոն հրատ., 1984 թ.): Անգլերեն տեքստը խմբագրել է Ժ. Լիպարիտյանը:

Մշտական ժողովրդական դատարանը հիմնվել է 1979 թ. իտալացի փիլիսոփա և իրավաբան Լ. Բասոյի կողմից, որը իտալական սոցիալիստական կուսակցության հիմնադիրներից է և ակտիվ դեր է կատարել Իտալիայում սահմանադրական-հանրապետական կարգերի հաստատման գործում: Միջազգային հասարակ ունեցող գիտնականներից, քաղաքական գործիչներից, արվեստի ու գրականության ներկայացուցիչներից կազմված այդ հաստատությունը նպատակ ունի հասարակական դատի ենթարկել ագրեսիայի սանձազերծման կամ վարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների մեջ ամբաստանվող պետություններին և արդեն ունեցել է մի շարք նիստեր՝ նվիրված տարրեր հարցերի: Դատարանը ձգտում է արտահայտել միջազգային հասարակական կարծիքը և իր գործունեության մեջ առաջնորդվում է միջազգային համապատասխան գործող օրենքներով:

Մշտական ժողովրդական դատարանի նախագահն է Ֆ. Ռիգոն (Բելգիա, Լուվենի կաթոլիկական համալսարանի իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր), փոխնախագահները՝ Ռ. Ֆլուրսթը (Հարավային Աֆրիկա), Մ. Օդան (Ճապոնիա), Ա. Ուրիբեն (Զիլի) և Զ. Վալդը (ԱՄՆ): Գլխավոր քարտուղարն է Զ. Տոնյոնին (Իտալիա):

Արևմտահայերի ցեղասպանությանը նվիրված դատավարությանը մասնակցել են Ֆ. Ռիգոն (նախագահ), Մ. Բենշիկը (Ալժիր, Ալժիրի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր), Հ. էդելշտամը (Շվեդիա, Զիլիում և Ալժիրում նախկին դեսպան), Ք. Ֆրայը (Ավստրալիա, պառլամենտի անդամ), Ա. Զիարդինին (Իտալիա, Հռոմի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր), Մ. Մակրալդը (Իռլանդիա, իրավագետ, հաղաղության միջազգային կազմակերպության պրեզիդենտ, խաղաղության Լենինյան և Նոբելյան մրցանակների դափնեկիր), Լ. Մատարասոն (Ֆրանսիա, Փարիզ, փաստաբան), Ա. Պ. էսկուիվիլը (Արգենտինա, Նոբելյան մրցանակի դափնեկիր, «Լատինական Ամերիկայում խաղաղության և արդարադատության ծառայություն» կազմակերպության գլխավոր կոորդինատոր), Ա. Ռոյը (Հնդկաստան, տնտեսագետ և լրագրող), Զ. Ուալդը (ԱՄՆ, Հարվարդի համալսարանի պաշտոնաթող պրոֆեսոր, Նոբելյան մրցանակի դափնեկիր) և ուրիշներ:

Նշված դատավարությունը տեղի է ունեցել «Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խումբ» (Ֆրանսիա, Փարիզ), «Կուլտուրական գոյատևում» (ԱՄՆ, Քեմբրիջ, Մասաչուսեթս) և «Սպառնալիքի տակ գտնվող ժողովուրդների ընկերություն» (ԳՅՀ, Գյոտինգեն) կազմակերպությունների հայցով՝ պարզաբանելու համար հետևյալը.

— արդյո՞ք հաստատված է, որ արևմտահայությունը տեղահանումների և կոտորածների է ենթարկվել Օսմանյան կայսրությունում

— արդյո՞ք այդ փաստերը իբրև ցեղասպանություն են որակվում Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու վերաբերյալ միջազգային համաձայնագրի (1948 թ.) իմաստով և տարածվում է դրանց վրա Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմություն չտարածվելու մասին համաձայնագրի իրավասությունը

— դրանից ի՞նչ հետևություններ են արվում միջազգային համագործակցության և շահագրգռված կողմերի համար:

Բնորոշ է այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը չի պատասխանել դատարանի հրավերին՝ ներկայացուցիչներ կամ համապատասխան փաստաթղթեր ուղարկել իր դիրքը պարզաբանելու համար: Այդ պատճառով դատարանը վճռել է նիստերի արձանագրություններին կցել երկու փաստաթուղթ, ուր պարունակվում են արևմտահայության ցեղասպանությունը ժխտող՝ թուրքական կողմի փաստարկները: Դրանք են՝ «Հայկական հարցը. ինը հարց, ինը պատասխան» վերնագրով գրքուկը (Անկարա, Արտաքին քաղաքականության ինստիտուտ, 1982 թ.) և 1984 թ. Փարիզի քրեական ատյանում պրոֆ. Աթաուի (Անկարայի համալսարան) տված ցուցմունքը:

Դատարանը հենվել է մի շարք միջազգային օրենքների ու համաձայնագրերի վրա, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիան (1948), Ցեղասպանությունը կանխելու և պատժելու վերաբերյալ համաձայնագիրը (1948 թ. դեկտեմբերի 9), Միջազգային իրավունքի հանձնաժողովի ձևակերպած և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած Նյուրնբերգի սկզբունքները (1951), Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմություն չտարածելու մասին համաձայնագիրը (1968 թ. նոյեմբերի 26), Ժողովուրդների իրավունքների համընդհանուր դեկլարացիան (Ալժիր, 1976, 4 հոկտեմբեր) և Մշտական ժողովրդական դատարանի կանոնադրությունը (Բուենոս Այրես, 1979, 24 հունիսի):

Հատորում զետեղված է պրոֆ. Վիդալ-Նաքեի առաջաբանը, որտեղ խոսվում է հայերի՝ իբրև հնագույն և իր ինքնությունը պատմականորեն պահպանած մի ժողովրդի մասին, որը դարձել է ցեղասպանության զոհ: Նա ընդգծում է, որ արևմտահայերի ցեղասպանությունը պետականորեն ծրագրված կոտորածի առաջին օրինակն է, որ իրականացրել են երիտթուրքերը 1915—1916 թթ.: Նախաբանում ներկայացվում է ցեղասպանությունը ժխտող թուրքական դիրքորոշման ձևավորման ընթացքը, որ սկսվել է դեռևս 1923 թ.: Սուլթանական կառավարությունը 1919 թ. ճանաչել էր իթթիհադի և նրա պարագլուխների հանցագործությունը (1919 թ. Կ. Պոլսի թուրքական ռազմական դատարանը երիտթուրքերի մի շարք ղեկավարների դատապարտեց մահապատժի), բայց շուտով թուրքական կառավարողները ամեն ինչ լռության մատնեցին, պաշտոնական խոսքը կտրականապես փոխվեց, դրա մեջ բացարձակորեն գերիշխող դարձավ Թուրքիայի հողերի ամբողջականության պաշտպանությունը: Լուրջանում, ինչպես նկատում է հեղինակը, Իսմեթ Ինենյուն լիովին արդարացնում էր օսմանյան կառավարության բռնությունները արևմտահայության հանդեպ և աղետների միակ մեղավոր ճանաչում հայերին: Այս փաստարկեր, ասվում է առաջաբանում, ալլեալ տարբերակներով կրկնվում է մինչև օրս:

Դատարանի նախագահ, պրոֆ. Ֆ. Ռիգոն իր բացման խոսքում հիմնավորել է արևմտահայության ցեղասպանության հարցի քննարկումը միջազգային դատարանում: Նա նշում է, որ այդ հարցը անմիջապես առնչվում է ՄԱԿ-ի Մի-

ջազգային հանձնաժողովի մշակած «միջազգային հանցագործություն» հասկացության հետ: Դրա համաձայն, նշում է նա, ցեղասպանությունը համարվում է միջազգային պարտավորությունների լուրջ և մեծ չափերի հասնող խախտում: Ֆ. Ռիգոյի մյուս դիտողությունը վերաբերում է պետական հանցագործությանը և դրա հետևանքներին. նա հայտնում է, որ այդպիսի հանցագործությունը պարտավորեցնում է հատուցումներ անել, որ գրվում է ապօրինի գործողություններ կատարած պետության վրա:

Մշտական ժողովրդական դատարանում զեկուցումներով հանդես են եկել Ռիչարդ Հովհաննիսյանը (ԱՄՆ, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, լոս Անջելես) և Ժերար Լիպարիտյանը (ԱՄՆ, Քեմբրիջ, Մասաչուսեթս, պատմաբան): «Հայկական հարցի պատմությունը 1878—1923 թթ.» իր զեկուցման մեջ Ռ. Հովհաննիսյանը նախ և առաջ համառոտակիորեն կանգ է առել հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության վրա, ապա լուսաբանել է արևմտահայության ծանր վիճակը XIX դարում, Հայկական հարցի ծագումը 1878 թ., մեծ տերությունների իրարամբեժ դիրքորոշումը Արևմտյան Հայաստանի վերաբերյալ, սուլթան Արդուլ Համիդի հայահալած քաղաքականությունը, հայկական կոտորածները 1890-ական թթ. և հարակից այլ հարցեր: Այնուհետև նա ցույց է տվել, թե քաղաքական ինչ իրադրություն ստեղծվեց արևմտահայերի համար XX դարի սկզբին և ինչ ընթացք ստացավ Հայկական հարցը 1912—1913 թթ. Բալկանյան պատերազմի տարիներին ու Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին: Խոսելով Մեծ եղեռնի մասին, զեկուցողը հրապարակել է մի շարք հավաստի տեղեկություններ ջարդարար երիտթուրքերի աննախընթաց բարբարոսությունների վերաբերյալ: Այնուհետև շարադրված է Հայկական հարցի պատմությունը միջազգային նոր իրադրությունների պայմաններում՝ 1918—1923 թթ.: Ժ. Լիպարիտյանը հանդես է եկել «Երիտասարդ թուրքերի շարժման գաղափարախոսությունը» թեմայով: Երիտասարդ թուրքերի գաղափարախոսությունը, որի ակունքները դիտվում են դեռևս XIX դարի երկրորդ կեսին, եղել է խորապես հետադեմ, պանթուրքիստական: Այդ պարզ դարձավ երիտթուրքերի հատկապես 1910 և 1911 թթ. Սալոնիկում կայացած գաղտնի համագումարներում ընդունված ծրագրերից, որոնք պահանջում էին թուրքացնել Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդներին: Երիտթուրքերի շովինիստական գաղափարախոսությունը տեսականորեն «հիմնավորեց» նրանց ջարդարարական գործունեությունը: Այնուհետև խոսելով արևմտահայության մասսայական կոտորածների մասին, Լիպարիտյանը հրապարակում է մի շարք արժեքավոր փաստաթղթեր արևմտահայության ցեղասպանության վերաբերյալ:

Մշտական ժողովրդական դատարանում հաղորդումներով հանդես են եկել նաև պատմաբան Քրիստոֆեր Ուոլկերը և Արևմտյան Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Տեսսա Հոֆմանը: Առաջինը անգլիական աղբյուրներից (մեծ մասամբ արխիվային փաստաթղթերից) բերել է վկայություններ, որոնք հաստատում են այն փաստը, որ թուրքական կառավարությունը, նախօրոք ընդունված ծրագրերի համաձայն, կազմակերպել է արևմտահայության ցեղասպանությունը ամենավայրագ ձևերով: Այդ մասին, ասել է նա, անգլիական արխիվներում պահվում են փաստաթղթերի բավական հարուստ հավաքածուներ: Զգալի հետաքրքրություն է ներկայացրել տիկին Տեսսա Հոֆմանի՝ «Գերմանացի ակադեմիկոսները հայերի 1915—1916 թթ. ցեղասպանության մասին» զեկուցումը, ուր բերված են կասկած չհարուցող բազմաթիվ վկայություններ երիտթուրքերի ոճրագործ քաղաքականության վերաբերյալ: Գրավոր հարուստ տեղեկություններ են թողել Յոհաննես Լեպսիուսը, Արմին Վեդները, Ֆակոբ Կոնցլերը, Մարտին Նիպագեն, էռնստ Քրիստոֆելը, լրագրող Շտրումերը, Թուրքիայում գտնվող գերմանացի վաճառականներ, ուսուցիչներ, միսիոներներ, գթության քույրեր և ուրիշներ: Հոֆմանը բերել է նաև պաշտոնական անձանց, այդ թվում գերմանական ղեկավարների, հյուպատոսների, փոխհյուպատոսների կողմից ռայխսկանցլերին և արտաքին գործոց մինիստրությանը ուղարկված նրանց

գաղտնի զեկուցագրերից քաղվածքներ, որոնցում Թուրքիային դաշնակից և նրան ամեն կերպ հովանավորող կայզերական Գերմանիայի կառավարության այդ ներկայացուցիչները՝ բոլորը, իհարկե, թուրքոֆիլներ, ստիպված էին խոստովանել (բայց միայն գաղտնի զեկուցագրերում), որ երիտթուրքերի կոմիտեի որոշման համաձայն, արևմտահայությունը իրոք որ ենթարկվում է ցեղասպանության: Գերմանական պաշտոնական փաստաթղթերում եղած վկայությունները շատ կարևոր են ու անհերքելի, քանի որ գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք նույնպես իրենց մեղքն ունեին հայկական կոտորածների գործում, չէին կարող առանց հիմքի մեղադրանքներ հորինել ո՛չ իրենց և ո՛չ էլ իրենց դաշնակից ու «բարեկամ» երիտթուրքերի մասին:

Ֆրանսիացի պատմաբան, հրապարակախոս Իվ Տերնոնի ծավալուն զեկուցումը նվիրված էր 1915—1916 թթ. ցեղասպանության պատմության լուսաբանմանը: Հեղինակը անդրադարձել է պատմական փաստերը ժխտելուն և նենգափոխելուն ուղղված՝ վերջին վաթսուն տարիների թուրքական դիրքորոշման նպատակներին ու շարժառիթներին: 1890-ական թթ. հայկական կոտորածներին, ինչպես նկատում է հեղինակը, հետևեց իթթիհադի ծայրահեղ ազգայնական և էքսպանսիոնիստական պանթուրքիզմի քաղաքականությունը, որն իր սուր ծայրով ուղղվեց արևմտահայության դեմ: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը էնվերի, Թալաաթի և մյուսների գլխավորությամբ 1914 թ. արդեն վճռել էր ոչնչացնել արևմտահայությունը: Հեղինակը ներկայացնում է ցեղասպանության ծրագիրը գործողության մեջ. պատերազմը սկսվելուց քիչ անց ծայր առան թուրքական բանակի և քրդական ջոկատների վայրագությունները արևելյան վիլայեթներում: 1914 թ. հոկտեմբեր-նոյեմբերին 24 հազար հայ կոտորվեց Վանի վիլայեթի հյուսիսային մասում, 7 հազարը՝ Ճուրդի շրջանում և 1000-ը՝ էրզրումի վիլայեթում: 1914 թ. դեկտեմբերին ուսական բանակից կրած ծանր պարտությունը (Սարիղամիշի մոտ), ինչպես նշում է հեղինակը, էնվերն օգտագործեց հակահայկական տրամադրություններ բորբոքելու համար: 1915 թ. փետրվարին հայ զինվորները և ոստիկանները զինաթափ արվեցին, առանձնացվեցին աշխատանքային գումարտակների մեջ և ոչնչացվեցին: Հայերին արգելվեց տեղաշարժվել կայսրության սահմաններում: Իվ Տերնոնը գտնում է, որ երիտթուրքերը արևմտահայերի ոչնչացման որոշումը գործողության մեջ են դրել 1915 թ. փետրվարի սկզբին, որից հետո, խիստ գաղտնի, վալիները և տեղական իթթիհադականները կառավարությունից սկսել են ստանալ համապատասխան հրահանգներ: Հայ բնակչության տեղահանումների և կոտորածների գործը դրվեց այսպես կոչված «Հատուկ կազմակերպության» շեթների վրա: Կ. Պոլսում ստեղծվեց աքսորի կոմիտե՝ իթթիհադի կենտկոմի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրյուփի գլխավորությամբ: Այդ կոմիտեի ենթաբաժինը տեղավորվեց Հալեպում, որը աքսորի կազմակերպման կենտրոնն էր: Իթթիհադական ծրագիրը, նկատում է հեղինակը, նպատակ ուներ արևմտահայերին տեղահանելու և բնաջնջելու միջոցով մեկընդմիջտ վերացնել Հայկական հարցը օսմանյան Թուրքիայում:

Այնուհետև Իվ Տերնոնը նկարագրում է տեղահանումների ու կոտորածների իրականացումը Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս մասերում՝ 1915 թ. ապրիլից մինչև 1916 թ. սկիզբը: 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձեռքակալվեցին բազմաթիվ հայ մտավորականներ և հասարակական գործիչներ (650 մարդ), որոնք աքսորվեցին և ճանապարհին ոչնչացվեցին: Դա ընդհանուր ազդանշան եղավ երկրով մեկ հայ բնակչության տեղահանումների և կոտորածների համատարած ծավալման համար: Այս պատճառով, նշում է ֆրանսիացի պատմաբանը, ապրիլի 24-ը համարվում է Թուրքիայում հայերի ցեղասպանության տարելիցի օրը: Հաղորդման մեջ ցույց է տրվում թուրքական այն փաստարկի սնանկությունը, ըստ որի, իբր, արևմտահայերի տեղահանությունը ոչ թե ոչնչացման ծրագիր էր, այլ թելադրված էր ռազմական անհրաժեշտությամբ: Զեկուցման մեջ բացահայտվում է տարբեր վիլայեթներում տեղահանումների ու կոտորածների ականառու միօրինակությունն ու հետևողա-

կանուխը, որ շատ պարզ ցույց է տալիս դրանց նախապես պլանավորված բնույթը: Նախ ձերբակալվում և սպանվում էին տեղական հասարակական գործիչներն ու մտավորականները, ապա ոչնչացվում էին մյուս տղամարդիկ, որին հետևում էր կանանց, երեխաների և ծերունիների աքսորը: Որոշ դեպքերում կանայք և երեխաները վաճառվում էին թուրքերին կամ քրդերին: Տերնոնը ուշադրութեամբ է հրավիրում այն փաստի վրա, որ տեղահանվածները զուրկ էին տարրական անվտանգութունից, ճանապարհին նրանց հաճախ կոտորում էին շեթեններ կամ այլ ավազակախմբեր: 1915 թ. մայիս-հուլիս ամիսներին 1 200 000 հայ ընթացավ պատմական Հայաստանի տարածքից: 1916 թ. հունվարի 16-ին, երբ ռուսական բանակը մտավ էրզրում, գտավ ընդամենը 22 հայեր (20 000-ից): Մոտ 200 000 մարդ խլամացվեց, շուրջ 50 000 աքսորյալ հասավ Հալեպ և Մոսուլ, մնացյալը՝ մոտ 700 000 մարդ սպանվեց ճանապարհներին: Աքսորը, եզրակացնում է հեղինակը, ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ ոչնչացում: Ամփոփելով իր հաղորդումը, իվ Տերնոնը ասել է, որ երեսուն տարվա ընթացքում՝ Աբդուլ Համիդից մինչև երիտթուրքեր և ապա Քեմալ, սպանվել է շուրջ երկու միլիոն հայ:

Դատարանը լսել է ներկայումս Ֆրանսիայում և ԱՄՆ-ում բնակվող, կոտորածներից փրկված սերաստացի Ա. Կուրեղյանի, ամասիացի Բ. Ինչիրաբյանի, խարբերդցի Պ. Նահապետյանի և էսքիշեհիցի Հ. Բոյաջյանի ցուցմունքները: Տեղահանումների, կոտորածների ու դրանց հետևող արհավիրքների պատկերը նրանց վկայութուններում ներկայացնում է մի ամբողջ ժողովրդի բնաջնջման պատմությունը:

Հատորում զետեղված է արեւմտահայութեան ցեղասպանութեան հարցի ներկատմամբ ներկայիս թուրքական պաշտոնական տեսակետն արտահայտող գրքուկը՝ «Հայկական հարցը. ինը հարց, ինը պատասխան» վերնագրով: Այստեղ հախուռն ու կամայական կերպով ժխտվում է ցեղասպանութեան պատմական իրողությունը: Ընդ որում, ամբողջովին խեղաթյուրվում է ոչ միայն ցեղասպանութեան փաստը, այլև այդ հանցագործությանը նախորդող ու հաջորդող շրջանների հայ ժողովրդի պատմությունը: Օսմանյան կառավարողների ուժիւրը հիմն ի վեր հերքելու հուսահատ ճիգերով՝ գրքուկի հեղինակները ստեղծել են հայ ժողովրդի պատմության սեփական, իրենց նպատակներին ստորադասված թուրքական խմբագրումը: Նրանք լիովին անտեսում են ոչ միայն պատմական իրողություններն ու փաստերը, այլև դրանց վրա հենվող ամբողջ գիտական գրականությունը: Թուրքական այդ փաստաթղթում որևէ նոր դրույթ կամ փաստարկ չկա. այն ներկայացնում է վերջին վաթսուն տարիների ընթացքում թուրքական քաղաքականության կամակաւարտ պատմագրության ստեղծած ստի ու կեղծիքների այն ամբողջ պաշարը, որն այնպես առատորեն գործի է դրվել՝ ցեղասպանութեան վերաբերյալ միջազգային հասարակայնութեան կարծիքը ապակողմնորոշելու նպատակով: Եթե օսմանյան կառավարողները և երիտթուրքական դահիճները դատաստան տեսան իր ինքնութունն ու մշակութիւնը պահպանած հնագույն մի ժողովրդի հանդեպ, ապա թուրքական այսօրվա գրականութեան մեջ զառանցական փորձ է արվում նույնն անել նրա պատմութեան հետ:

Արեւմտահայութեան նկատմամբ հրեշավոր հաշվեհարդարը ուրանալու ձգտումը թուրքական կողմին ստիպում է վերանայել նույնիսկ պատմական տարրական ճշմարտութունները, որոնք վաղուց ի վեր հանրահայտ են: Նշված պատասխաններում, օրինակ, ժխտվում է, որ Արեւմտյան Հայաստանը հայ ժողովրդի բնօրրանն ու հայրենիքն է, որ օսմանյան թուրքերը բռնի ուժով են տիրել Արեւմտյան Հայաստանին, որ շեն եղել ո՛չ արեւմտահայերի դարավոր հարստահարումներ, ո՛չ 1890-ականի կոտորածներ և ո՛չ էլ պետականորեն կանխամտածված ու մեթոդիկ կերպով գործադրված ցեղասպանություն: Մանրագույն այդ հանցագործությունը ցեղասպանութեան արդի փաստաբանների բերանում հնչում է իբրև «թուրքական կառավարութեան ինքնապաշտպանական միջոցառում» և խնամքով իրականացված տեղահանում: Այս նպատա-

կով փաստաթղթում վկայակոչվում են ստանդոդ ու կեղծ «վավերագրեր», որոնք, իբրև, վկայում են տեղահանվողների կյանքի և կայքի անձնամխելիության, աքսորի իրականացման «գթասիրտ» եղանակների մասին: Փաստաթղթում նենգափոխված են արևմտահայության տեղահանումների և բնաջնջման վերաբերյալ Թալաթի հրամանները: Հայտնի է, որ Ս. Թեհլիրյանի դատավարության ժամանակ Ա. Անտոնյանը Բեռլինի դատարանին էր ներկայացրել այդպիսի հինգ գրավոր հրաման (գտնվել են 1918 թ. Հալեպում, օսմանյան պաշտոնյա Նայիմ բեյի գրասենյակում և մասամբ տպագրվել Փարիզում, 1920 թ.): Այն ժամանակ դատարանը հաստատել էր դրանց իսկությունը: Թուրքական կողմը ճամարտակում է դրանց «կեղծ» լինելու մասին: Նա փորձում է շրջանառության մեջ գնել օսմանյան արխիվներում (որոնք մատչելի են բացառապես իրենց՝ Թուրք հեղինակներին) իբր գտնված Թալաթի հրամանները, որտեղ խոսվում է «սահմանամերձ շրջաններից աքսորվող հայ բնակչության անվտանգության ապահովման» մասին: Պատմության կեղծարարները բավարարվել են միայն մերկապարանոց հայտարարություններով, որովհետև ոչ մի ապացույց չէին կարող բերել այդ «վավերագրերի» հավաստիության օգտին:

Թուրքական պաշտոնական այդ հրատարակության մեջ տրված է հետագա շրջանի (1917—1920 թթ.) հայ-թուրքական հարաբերությունների խարդախված գնահատականը: Դրանում աչ ու ձախ նենգափոխվում են խնրահայտ ճշմարտություններ, փորձեր են արվում ժխտել այն վայրագություններն ու կոտորածները, որոնք տեղի ունեցան 1918 թ., երբ Թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս ու Հայաստան: Այդ գրքույկը և բազմաթիվ այլ հրատարակություններ ամբողջովին ներծծված են բուրժուա-ազդայնական գաղափարախոսության ոգով և բացահայտորեն նպատակ ունեն ցեղասպանություն կատարած Թուրքական կառավարողներին զերծ պահել միջազգային օրենքներով առաջադրվող արդարացի մեղադրանքից:

Դատարանում հանդես է եկել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ենթակոմիտեի նախկին տնօրեն, պրոֆ. Թ. վան Բովենը (Նիդեռլանդներ): Նա հաղորդում արեց 70-ական թթ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում հայերի ցեղասպանության հարցի քննարկման ընթացքի մասին: Վան Բովենը նշում է, որ 1974 թ. մարտին հանձնաժողովում քննարկվող «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու վերաբերյալ համաձայնագրի» 30-րդ կետում հիշատակվում էր հայերի բնաջնջումը՝ իբրև XX դարի առաջին ցեղասպանություն: Խնդիրը քննարկելիս Թուրքական ներկայացուցիչը ձգտել է ամեն գնով համաձայնագրի տեքստից հանել տալ այդ հիշատակումը: Նա պնդել է, ինչպես նկատում է Թ. վան Բովենը, թե այդ հիշատակումը, իբր, խեղաթյուրում է պատմական ճշմարտությունը, որովհետև ռազմական պայմաններով թելադրված օսմանյան կառավարության գործողությունները որակում է իբրև ցեղասպանություն: Վան Բովենը հայտնում է, որ ՄԱԿ-ի ենթահանձնաժողովում խնդիրը կրկին քննարկվեց 1975 թ. սեպտեմբերին. Թուրքիայի ներկայացուցիչը նորից ելույթ է ունեցել վկայակոչման դեմ, որը մի քանի պետությունների համանման դիրքորոշման պայմաններում դարձյալ հանվել է տևյալից: 1978 թ. սեպտեմբերին և 1979 թ. մարտին հանձնաժողով ներկայացված համաձայնագրի նախագծերը, նշում է Թ. վան Բովենը, այլևս չէին պարունակում արևմտահայերի ցեղասպանության հիշատակումը:

Հաղորդումից պարզվում է նաև, որ Թուրքական ներկայացուցիչը և նրան աջակցողները ճնշում են գործադրել ենթահանձնաժողովի փորձագետի վրա: Պետք է նկատել, որ այդ խնդրում համաձայնագրի վրա արած իրենց հարձակումներով Թուրքիային աջակցող որոշ բուրժուական տերություններ ամենից առաջ ելնում են իրենց հետադիմական շահերից: Ի դեպ, վերջերս, անդրադառնալով 1985 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթակոմիտեում որոշ պետությունների բռնած դիրքին, «Իզվեստիա» թերթը գրում է, որ «մի շարք երկրների (ՍՍՀՄ-ը դրանց թվին չի պատկանում) ներկայացուցիչներ ժխտում են 70-ամյա վաղեմության իրադարձությունները որպես ցեղասպանու-

իշխան խոշորագույն և դաժանագույն ակտ որակելը»։ Մերկացնելով Արևմուտքի հետադիմական շրջաններին, որոնք փորձում են խեղաթյուրել ՍՍՀՄ-ի դիրքը արևմտահայերի ցեղասպանության հարցում և վարկարեկել նրա հետ բարեկամական կապերը խորացնելու համար հանդես եկող արտասահմանի հայ հասանելիների առաջադիմական ուժերին, թերթը շարունակում է. «Իսկ ինչ վերաբերում է օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդի դեմ 1915—1916 թվականներին իրականացված ցեղասպանության հարցում սովետական ներկայացուցչի դիրքին, ապա այդ մասին ամենից լավ վկայում է նույն ենթահանձնաժողովի աշխատանքից վերցված հետևյալ դրվագը։ Ի պատասխան այդ շարագործությունն «արտաքին միջամտության ինչ-որ գործոնի» վկայակոչմամբ արդարացնելու պակաստանյան դիտորդի փորձերի, սովետական ներկայացուցչի վ. Սոֆինսկին իր ելույթում ամենայն վճռականությամբ ընդգծեց. Թուրքիայի այն ժամանակվա կառավարողների կողմից հայերի դեմ կատարված հրեշտաբանական ցեղասպանությունը ոչնչով չի կարող արդարացվել»¹ (ընդգծումը մերն է—Մ. Ն., Ա. Ն.)։

Իստարանում ելույթ է ունեցել պրոֆ. Տ. Գուլյումճյանը՝ «Հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության թուրքական քաղաքականության շարունակություն» թեմայով։ Հեղինակը նշում է, որ «Հայաստան» անվանումը ջնջված է թուրքական բոլոր քարտեզներից ու փաստաթղթերից։ Կիրառվում է հատուկ գրաքննություն և եթե այդ անունը շրջանառության մեջ է դրվում արտասահմանի քարտեզներում (օրինակ, ավիագծերի չափացուցակներում), ապա դրան հետևում է պաշտոնական եռանդուն բողոք։ 1950 թ. սկսած՝ երկրի արևելյան մասում փոխվում են այն քաղաքների և ընդհանրապես բնակավայրերի անունները, որոնք կրում են հայ ժողովրդի քաղաքակրթության և պատմական հայրենիքի հետքերը։ Փոխվել է պատմական Հայաստանի անունների մոտ ութսուն տոկոսը, պահպանվել են միայն Վան, Բիթլիս, էրզրում անունները։ Հայաբնակ նախկին վիլայեթներում հայեր չեն ապրում, բացի իր ազգային ինքնությունը թաքցրած մի որոշ մասից։ Թուրքիայի հայերը կենտրոնացել են Ստամբուլում, որտեղ, չնայած ահաբեկման բոլոր ձևերին, փորձում են պահպանել իրենց ազգային գոյությունը։ Տ. Գուլյումճյանը հայտնում է, որ կանխամտածված կերպով ոչնչացվում են հայ մշակույթի հուշարձանները։ Նա առանձնապես նշում է, որ բազմաթիվ եկեղեցիներ, քաղաքացիական շենքեր և տներ դիտավորյալ կործանվել են հրկիզմամբ։ Ե պալատներից նյութերով։ Գետինն են հավասարեցվել հազարից ավելի վանքեր ու եկեղեցիներ, կիսակործան են արվել 691 այլ կրոնական կառույցներ։ Շատ եկեղեցիներ վերածվել են մզկիթների, բանտերի, ախոռների և այլն։ Հեղինակը այդպիսի հուշարձաններից հիշատակում է Օրդուի կառույցը, Ուրֆայի մոտ գտնվող տաճարը, Վարագի վանքը և այլն։ Աշխատել են ոչնչացնել հուշարձանները՝ ջնջելով հայերեն մակագրությունները (Կիլիկիայի գրեթե բոլոր եկեղեցիները) կամ գիտությունը լավ ծանոթ հայկական հուշարձանները վերագրել են սելջուկ թուրքերին (Կարսի և Աղթամարի եկեղեցիները, որոնք կառուցվել են մինչև սելջուկները)։ Հաղորդման վերջում հեղինակը հայտնում է, որ այդպիսի գործողությունները շարունակվում են մինչև օրս։

Դատարանը լսել է պրոֆ. Լ. Կուպերի (ԱՄՆ, Կալիֆորնիայի համալսարան, սոցիոլոգ) ելույթը՝ նվիրված ցեղասպանության հասկացության և հայկական կոտորածների նկատմամբ դրա կիրառելիության թեմային։ Այստեղ տրված է «ցեղասպանություն» հասկացության ՄԱԿ-ի սահմանման և 92 պետությունների կողմից վավերացված «ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու վերաբերյալ համաձայնագրի» վերլուծությունը։ Հեղինակը վկայակոչում է այդ պրոբլեմի մասնագետ մի շարք գիտնականների (Ա. Թոյնթի, Հ. Ֆենյ, Ռ. Մելսոն), որոնք հայերի ցեղասպանությունը որակում են իբրև արդի դարաշրջանում մարդկության դեմ ուղղված ծանրագույն

¹ «Известия», 1985, 18 ноября.

ոճրագործություն՝ «Ժամանակակից կանխամտածված ցեղասպանություն»։ Լ. Կուպերը գտնում է, որ Ա. Թոյնթի, ամերիկյան դեսպան Մորգենթաուի ներկայացրած վկայությունները, կոտորածներից փրկվածների հաղորդածները և արևմտահայության վերացումը իրենց պատմական հայրենիքից՝ չափազանց ակնհերև են դարձնում ցեղասպանության հանցագործության փաստը։ Նա ընդգծում է, որ 1915—1916 թթ. կոտորածների հետևողականորեն իրագործվող ծրագիրը ներկայացնում է նախապես մշակված մի համակարգ, որտեղ տեղահանումները դարձան կոտորածներ։ Կուպերը չի բացառում տեղական մասնավորությունների առկայությունը. այսպես, Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ բնակչությունը դուրս մնաց կոտորածների պլանից (Կուպերն այստեղ չի նշում Զմյուռնիայի հայության կոտորածը 1922 թ.), կամ եթե շատ տեղերում հայ բնակչությունը ամբողջովին կոտորվեց, ապա որոշ վայրերում տեղահանումները ստացան աքսորի ձև։ Սակայն ցեղասպանության պատկերը դրանից չի փոխվում։ Երիտթուրքերի բարբարոս գործունեության ամբողջ ընթացքը ակնառու է դարձնում ցեղասպանության կանխամտածվածությունը, եզրակացնում է Կուպերը։ Հետևաբար, նշում է նա, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի տեղեկագիրը ցեղասպանության պատմության վերաբերյալ ներածականում ըստինքյան պետք է ներառի հայկական կոտորածների հիշատակումը և արտացոլի հայերի կոտորածների փաստը՝ իբրև արդի դարաշրջանի առաջին ցեղասպանություն։ Թուրքական կառավարության ձեռնամար փաստերի անտեսումը, նրա կարծիքով, նշանակում է կամայականորեն վերանայել պատմությունը։ Ընդսմին, Լ. Կուպերը նկատում է, որ պատմությունը խեղաթյուրելու փորձեր կատարվում են նաև շատ հրատարակություններում։ Հենվելով Ռ. Հովհաննիսյանի տվյալների վրա, նա նշում է, թե ինչպես ԱՄՆ-ի կառավարությունը, տեղի տալով թուրքական պնդումներին, արգելել էր «Մետրո գոլդվին Մայեր» կինոստուդիայում նկարահանել Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հիման վրա պատրաստվող ֆիլմը։ Կուպերը հիշում է նաև 1982 թ. թուրքական կառավարության դիվանագիտական ձեռնմաները ԱՄՆ-ի ու արևմտեվրոպական հրեական դեկավարների վրա՝ գումարվելք մի կոնֆերանսում հայերի ցեղասպանության քննարկումը կասեցնելու համար։ Նրա կարծիքով, եթե թուրքերի այդ ձգտումը վճռական դիմադրության չհանդիպի, ապա արևմտահայերի նկատմամբ թուրքական ոճիրը կարող է չքանալ պատմության հիշողությունից։ Կուպերը հույս է հայտնում, որ ժողովրդական դատարանը կնպաստի խնդրո առարկա հարցի արդարացի լուծմանը, ուշադրություն կհրավիրի պատմությունը նենգափոխելու վրա և կամրապնդի հասարակական զգացումներն ընդդեմ ոճրի։

Հատորում հրապարակվել է պրոֆ. Ժ. Վերհովենի հաղորդումը՝ «Հայ ժողովուրդը և միջազգային իրավունքը» վերտառությամբ։ Դատարանը, հայտնում է նա, հրավիրվել է ստուգելու, թե որքանով է հիմնավորված թուրքական կառավարողների կողմից կատարված ցեղասպանության մեղադրանքը և, դրա հաստատվելու դեպքում, հանգելու հետևությունների, որոնք բխում են միջազգային իրավունքից։ Նրա կարծիքով, միջազգային իրավական նորմերն ունեն հիմնարար նշանակություն, սակայն չեն սպառում Հայկական հարցի էությունը։ Պակաս կարևոր չէ ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավունքների սահմանումը։ Հաղորդման հեղինակը միջազգային իրավունքի մակարդակով բացահայտում է օսմանյան պետության ստանձնած պարտավորությունները արևմտահայերի նկատմամբ (Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածներ), մի պետության, որը միջազգային համագործակցության մեջ էր մտել դեռևս 1856 թ. մարտի 3-ի Փարիզի պայմանագրով։ Հակառակ այդ պարտավորությունների, 1894 թ. Սասունի կոտորածներով թուրքական իշխանությունները ձեռնարկեցին բնաջնջման դաժան քաղաքականություն։ Ուսնահարված 61-րդ հոդվածը հիշարժան է երկու տեսակետից. այն օսմանյան կառավարության վրա դնում էր անվիճելի պարտավորություն՝ արևմտահայերի քաղաքացիական իրավունքների ապահովման իմաստով և երկրորդ, տերությունն-

րի վրա պատասխանատվություն էր դնում իրականացնել դրա վերահսկողությունը: Ո՛ր մեկ, ո՛չ մյուս կողմը չկատարեց իր պարտավորությունները արևմտահայության նկատմամբ:

Այնուհետև, Ժ. Վերհովենը անդրադառնում է 1918—1920 թթ. հայ-թուրքական հարաբերություններին և բուրժուական տերությունների դիրքորոշմանը Հայկական հարցի նկատմամբ: Հեղինակը նկատում է, որ հայ ժողովուրդն ունի ինքնորոշման իրավունք, մինչդեռ Երիտթուրքերի կողմից մերժվել էր ոչ միայն այդ իրավունքը, այլև այդ մերժումը ուղեկցվել էր հայերի կոտորածներով: Ցեղասպանության վերաբերյալ վճիռը թողնելով դատարանին, հեղինակը հատուկ հիշելիցնում է, որ դեռևս ցեղասպանությունից առաջ, Փարիզի 1856 թ. պայմանագրից սկսած արևմտահայերը անընդհատ ենթարկվել են վայրագ ճնշումների, հարստահարությունների և կազմակերպված թալանի բազմաթիվ ձևերի:

Այնուհետև Ժ. Վերհովենը կանգ է առնում ցեղասպանությունը կանխելու և պատժելու վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշման վրա (1948 թ. դեկտեմբերի 9): Դրանով ցեղասպանությունը դատապարտվում է իբրև հանցագործություն միջազգային իրավունքի տեսակետից, անկախ այն բանից, թե այդպիսին կատարվել է խաղաղ պայմաններում, թե պատերազմի ժամանակ: Նա քննարկում է, որ մասնավորապես, այդ համաձայնագրի 4-րդ կետը, որը վերաբերում է ցեղասպանության հանցագործությունը պատժի ենթարկելուն: Մեղավորները պատժի ենթակա են անկախ այն բանից՝ պատասխանատու պաշտոնյաներ են, հաաարակական պաշտոնատարներ, թե մասնավոր անձինք: Անկասկած է, նշում է Վերհովենը, որ արևմտահայության բնաջնջումը միանգամայն համապատասխանում է վերհիշյալ համաձայնագրի 2-րդ կետին (ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի անդամների ոչնչացումը, ֆիզիկական կամ հոգեբանական ծանր խեղում պատճառելը և խմբին ինտենսիվ ձևով այնպիսի պայմանների մեջ դնելը, որը նրան հասցնում է ամբողջական կամ մասնակի ֆիզիկական ոչնչացման): Հայերի ցեղասպանությունը կատարվել է նախօրոք կազմված ժրագրով: Նա գտնում է, որ դատարանը պետք է վճռի հենց այդ՝ կանխամտածվածության հարցը, որ ապացուցվում է բազմաթիվ փաստերով: Ժ. Վերհովենը կարծում է, որ դատարանի մյուս կարևոր խնդիրն է որոշել, թե արդյոք արևմտահայերը կազմե՞լ են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբ, որի ամբողջական կամ մասնակի բնաջնջումը պիտի համարվի ցեղասպանություն՝ ըստ նշված համաձայնագրի: Անվիճելի է, ասում է նա, որ հայերը, իբրև ազգություն, պահպանել էին իրենց ինքնավարությունը Օսմանյան կայսրության մեջ՝ Կ. Պոլիսը թուրքերի կողմից նվաճվելուց հետո և կազմել խումբ՝ համաձայնագրի ենթադրած իմաստով: Արևմտահայությունը, նշում է նա, էթնիկական խումբ է, որ դարձյալ նկատի ունի համաձայնագրի նույն՝ 2-րդ կետը: Այդ պատճառով, եզրակացնում է նա, իրավական տերմինով արևմտահայության բնաջնջումը նշանակում է ցեղասպանություն, որի համար թուրքական իշխանությունները պետք է պատասխանատվություն կրեն: Նա նկատում է նաև այն հանգամանքը, որ 1948 թ. դեկտեմբերի 9-ի համաձայնագիրը Թուրքիան անվերապահորեն վավերացրել է 1950 թ. հուլիսի 31-ին, իսկ արևմտահայերի կոտորածները տեղի են ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Կոտորածների պատասխանատուները կենդանի չեն, սակայն այս հարցը, հեղինակի կարծիքով, որոշակի նշանակություն չունի. պատժի ենթարկելու անհնարինությունը դեռևս չի նշանակում, որ օրենքի խախտում չի եղել և Թուրքիան սկզբունքորեն քաղաքացիական պատասխանատվություն չպետք է կրի հանցագործության համար: Այստեղ կրկին առաջ է քալիս վաղեմության իրավունքի խնդիրը, սակայն ցեղասպանությունը ենթակա չէ վաղեմության իրավունքին: Այնուհետև Վերհովենը պարզաբանում է, որ քաղաքացիական իմաստով պատասխանատվությունը նշանակում է փոխհատուցել նաև նյութական վնասների և ապա այն ծանրագույն կորստի դիմաց, որ կրել է հայ ժողովուրդը: Հատուցման ձևերը, հայտ-

նում է նա, նախատեսված են միջազգային իրավունքով: Թուրքական հանրապետության առաջին հատուցումը, նրա կարծիքով, պետք է լինի ցեղասպանության ընդունումը՝ առանց պատմական ճշմարտությունը նենգափոխելու: Եւ ավստոսանք հայտնելը կատարվածի համար:

Ամփոփելով իր խոսքը, Ժ. Վերհովենը հատկապես նշում է, որ հայերի ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է, որի համար թուրքական կառավարությունը պետք է պատասխանատվություն կրի՝ առանց օգտագործելու պետության ընդհատության պատրվակը (այսինքն՝ օսմանյան Թուրքիայի՝ հանրապետության վերածվելու իրողությունը)՝ խուսափելու համար այդպիսի պատասխանատվությունից:

Այնուհետև հրապարակված է դատարանի դատավճիռը: Նրանում ցեղասպանությունը որակվում է իբրև մարդու իրավունքները ոտնահարող ամենածանր հանցագործություն: Վկայակոչվում են Ալժիրի 1976 թ. հուլիսի 4-ի դեկլարացիայի այն կետերը, որոնք վերաբերում են յուրաքանչյուր ժողովրդի գոյությանը, նրա ազգային ու մշակութային ինքնությանը: Արձանագրված է հատկապես այն փաստը, որ թուրքական իշխանությունները հրաժարվում են ընդունել իրենց պատասխանատվությունը ցեղասպանության համար: Միջազգային վերջին համաժողովներում և հանդիպումներում թուրքական կառավարությունը ամեն կերպ ջանում է խոչընդոտել արևմտահայերի ցեղասպանության փաստի ճանաչմանը: Ներկայիս թուրքական կառավարությունը, ասված է դատավճիռում, ոչ միայն չի ընդունում ցեղասպանությունը, այլև շարունակում է բնաջնջման քաղաքականությունը: Դա, մասնավորապես, դրսևորվում է արևմտահայերի մշակութային հուշարձանները կործանելու և նենգափոխելու գործողությունների մեջ: Դատավճիռում ընդգծվում է, որ արևմտահայերի ցեղասպանությունը մնում է ժամանակակից իրողություն, որը պետք է ընդունվի պատասխանատու պետության ղեկավարների կողմից: Հանցագործության զոհերը, ասված է դատավճիռում, օրինական բավարարության իրավունք ունեն, անկախ այն բանից, թե երբ է կատարվել հանցագործությունը: Ուշադրություն է դարձվում արևմտահայության ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի լուծական պատճառների վրա և պարզաբանվում է, որ արևմտյան տերությունները (բացառությամբ Ֆրանսիայի) տնտեսական, քաղաքական և ռազմական կապեր ունեն Թուրքիայի հետ, որը և նրանց այդ հարցում մղում է համագործակցության: Դատարանը հույս է հայտնում, որ դատավարության նյութերը կհանգեցնեն արևմտահայության ցեղասպանության ճանաչումը, քանի որ այդպիսի ճանաչումը արմատական պայքար է ցեղասպանության դեմ:

Դատավճիռում ներկայացված արևմտահայերի ցեղասպանության փաստերի հիման վրա երիտթուրքական գաղափարախոսությունը բնութագրվում է որպես ազգայնամոլ, պանթուրքական ու պանթուրանական: Ընդգծվում է արևմտահայերի բացառիկ ծանր վիճակը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և այն հանգամանքը, որ նրանք զբաղեցնում էին այն տարածքը, որը օսմանյան Թուրքիան կենսականորեն կարևոր էր համարում Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում իր իմպերիալիստական, պանթուրքական զաղափարների իրականացման համար: Նշվում է նաև այն, որ հայ ժողովուրդը բաղադրականապես բաժանված էր պատերազմի մեջ մտած հակադիր կողմերի միջև: Դատավճիռում հանգամանորեն բնութագրվում են թուրքական իշխանությունների, իթթիհադական կոմիտեի ձեռնարկած նախապատրաստական աշխատանքները՝ հայերին տեղահանելու և կոտորելու գործում և ցեղասպանության իրադարձությունները: Հատկապես նշվում է, որ դրա հետևանքով Արևմտաօսման Հայաստանում հայ բնակչությունը հիմնովին վերացվեց:

Դատավճիռում հերքվում են թուրքական ստահող փաստարկները: Նշվում է, որ ոչնչացվել է արևմտահայ բնակչության երկու երրորդը, և թուրքական կողմն է այն առարկությունը, թե ոչ միայն արևմտահայերը, այլև մահմեդականները ևս կորուստներ են կրել պատերազմի պատճառով, քննության չի դիմանում: Պատճառաբանվում է, որ արևմտահայերը ոչ թե սոսկ կորուստներ են

տվել, այլ զլիսովին ոչնչացվել են սեփական հայրենիքում: Իրենից պատասխանատվությունը հեռացնելու համար թուրքական կառավարությունը պնդում է, թե արևմտահայերը խռովություն են բարձրացրել օտար երկրների հրահրմամբ և դավաճանել Թուրքիային պատերազմի ժամանակ: Դատարանը զրտնում է, որ Օսմանյան կայսրության դեմ արևմտահայերը զինված գործողություններ են սկսել միայն 1915 թ. ապրիլին, երբ ինքնապաշտպանական մարտեր էին մղում Վանում: Վճռականորեն հերքվում է նաև թուրքական կողմի ամբողջովին կեղծ այն մեղադրանքը, թե արևմտահայերը թուրք բնակչությանը ենթարկել են ցեղասպանության: Նշվում է նաև այն, որ Ս. Թեհլիրյանի դատավարությանը ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը հաստատվում է նրանով, որ ամբաստանյալը այն ժամանակ արդարացվել է Բեռլինի դատարանի կողմից:

Դատավճռի «Հայ ժողովրդի իրավունքների մասին» հատվածում ընդգրծվում է, որ թուրքական պետությունը պետք է ճանաչի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները և ավելի քան 100 տարի առաջ կնքված պայմանագրի (Բեռլինի 1878 թ. կոնգրեսի) որոշումները: Նշվում է, որ այդ իրավունքները պետք է հարգվեն մանավանդ այն դեպքում, երբ խոսքը ՄԱԿ-ի անդամ պետության մասին է:

Ցեղասպանության մեղադրանքին վերաբերող մասում նշվում է 1949 թ. դեկտեմբերի 9-ի համաձայնագիրը ստորագրած պետությունների պարտականությունների բնույթը: Համաձայնագրում ցեղասպանությունը համարվում է միջազգային հանցագործություն, ուրեմն այն ստորագրող Թուրքիայի կողմից այդպիսի հանցագործության դատապարտումը կվկայեր այն մասին, որ նա այդպիսի հանցագործություն այլևս թույլ չի տա: Ընդգծվում է, որ արևմտահայերի բնաջնջումը համապատասխանում է «ցեղասպանություն» հասկացության բնութագրին: Այն իրականացվել է կանխամտածված կերպով. թուրքական իշխանությունները մի կողմից ձեռնարկել են դրա անմիջական կատարումը, իսկ մյուս կողմից ակտիվ պրոպագանդ են ծավալել քաղաքացիական բռնակցության մեջ՝ հրահրելով ու խրախուսելով նրան ոչնչացնելու արևմտահայությանը: Թուրքական կողմի մերկապարանոց ու անհիմն մեղադրանքները արևմտահայության դեմ հերքվում են նաև այն տեսակետից, որ ցեղասպանությունը այնպիսի դաժանադույն հանցագործություն է, որ արդարացման ոչ մի հիմք չի բնդունում:

Դատավճռի եզրափակիչ մասում արվում են մի շարք հետևություններ: Նշվում է, որ թուրքական պետության առաջին պարտավորությունն է՝ ընդունել փաստերը, առանց նենգափոխելու կամ կոծկելու իրականությունը: Միջազգային պրակտիկան, ասված է այնտեղ, բավարար հիմք է տալիս եզրակացնելու, որ ցեղասպանության իրադարձություններից ի վեր թուրքական պետության ինքնությունը չի փոխվել: Նրկիրը ոչ տարածք է կորցրել, և ոչ էլ նրա քաղաքական համակարգն է այնպես վերակառուցվել, որպեսզի ընդհատվեր նրա շարունակվող ինքնությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի: Հետևաբար, ընդգծվում է դատավճռում, չի կարելի կարծել, որ օսմանյան պետությանը հաջորդած կառավարությունը կարող է հրաժարվել պատասխանատվություն կրելուց, մի պատասխանատվություն, որ միջազգային համագործակցության մեջ շարունակում է մնալ նրա վրա: Դատարանի կարծիքով, ներկայիս թուրքական կառավարությունը, ինչպես և իր նախորդը, շարունակում է կրել այդ պատասխանատվությունը՝ իրավահաջորդության ուժով:

Դատավճռում եզրակացվում է.

— հայ ժողովուրդը ունի արդարացի պահանջներ, որոնք պետք է հարգվեն ըստ միջազգային իրավունքի.

— արևմտահայերի կոտորածները, աքսորը և ոչնչացումը ցեղասպանություն է, որը վաղեմության իրավունք չի ճանաչում.

— երիտթուրքական կառավարությունը մեղավոր է 1915—1917 թթ. կատարված ցեղասպանության համար.

— Հայերի ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է, որի համար թուրքական պետությունը պետք է պատասխանատվություն կրի՝ առանց օգտագործելու պետության ընդհատության պատրվակը պատասխանատվությունից խուսափելու համար։

— այդ պատասխանատվությունը ամենից առաջ ցեղասպանության իրողությունը և դրա հետևանքով հայ ժողովրդին պատճառած վնասները ճանաչելն է։

— ՄԱԿ-ը և նրա յուրաքանչյուր անդամ իրավունք ունեն պահանջելու այդ «Հայերի ցեղասպանությունը և հասարակական կարծիքը» վերնագրի ներքո հատորում տպագրվել են ֆրանսիական լայն հասարակայնության կարծիքը ներկայացնող հեռագրեր և նամակներ, որտեղ համակրանք է հայտնվում դատարանին՝ նրա նպատակների և հայերի ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչելու վերաբերյալ նրա ձեռնարկած միջոցառումների համար։ Դատարանին հեռագրեր են ուղարկել Լ. Մերմազը (ազգային ժողովի նախագահ, Փարիզ), Ֆ. Բասինեն (սոցիալիստական խմբի փոխնախագահ), կարդինալ Լյուստիժեն (Փարիզի արքեպիսկոպոս), Ժ. Լանզը (կուլտուրայի մինիստր), Է. Գլինը (եվրոպական պառլամենտի դեպուտատ, սոցիալիստական խմբի նախագահ), Ա. Գարինյոնը (Գրենոբլի քաղաքագլուխ) և ուրիշներ։

Նամակագիրներից Լ. Շվարցը (մաթեմատիկոս), օրինակ, ընդգծում է հայերի ցեղասպանության առանձնահատուկ դաժանությունը և անարդարացի է համարում այն փաստը, որ, ի տարբերություն այլ ցեղասպանությունների, այն դեռևս միջազգային ճանաչում չի գտել։ Նա համոզմունք է հայտնում, որ ՄԱԿ-ը, անկախ Թուրքիայի ընդդիմությունից, կճանաչի ցեղասպանությունը, որով կհարգվի անցյալի նահատակների հիշատակը և հաշվի կառնվեն նրանք, ովքեր ապրում են այսօր։ Ե. Լերուա-Լադյուրին (Կոլեժ դը Ֆրանս) ևս ընդգծում է ցեղասպանությունն ընդունելու կարևորությունը և կարծիք հայտնում, որ պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ փոխհատուցելու անմեղ ժողովրդին հասցված ծանր կորուստները։ Կ. Լեֆորը (Սոցիալական գիտությունների ուսումնասիրության բարձրագույն դպրոցի տնօրեն) արժեքավորում է դատարանի վճիռն այն տեսակետից, որ այն դատապարտում է հայերի ցեղասպանությունը և այդ հարցը բարձրացնում է միջազգային իրավասու կազմակերպությունների առջև։ Լևինան (Փարիզ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր) ընդգծում է դատարանի քննարկած հարցի այսօրվա արժեքը՝ ցեղասպանությունն ընդհանրապես դատապարտելու և կանխելու իմաստով։ Պ. Բրետոնը (Փարիզի և Լիոնի կաթոլիկական ինստիտուտի պրոֆեսոր) հատկապես նշում է հայերի ցեղասպանության հարցի ճանաչման ժամանակակից նշանակությունն ու հետևանքները։ Պ. Լեպինը (Պաստյորի ինստիտուտ, պրոֆեսոր, գիտությունների ակադեմիայի անդամ) գրում է, որ 1925—1926 թթ. Բեյրութի ճամբարներում անձամբ շփվել է կոտորածներից փրկված արևմտահայերի հետ և ականատես եղել նրանց անասելի ծանր տառապանքներին։ Նա անմարդկային է համարում օսմանյան Թուրքիայի հալածական քաղաքականությունը արևմտահայերի նրկատմամբ և խստիվ դատապարտում ցեղասպանությունը։ Պրոֆ. Ժ. Լիոթարը (փիլիսոփա, պոլիտեխնիկական ինստիտուտ) նկատում է, որ դատավարությունը հասարակական գիտակցությանը հայտնի է դարձնում այն, ինչի մասին որևէ անհրաժեշտորեն պետք է տեղյակ լինի։ Հասարակական գիտակցությունը, նշում է նա, պետք է դատապարտի հայերի ցեղասպանությունը՝ վեր լինելով ամեն տեսակի ճնշումներից։

Դատարանին իր հայտարարությունն է ուղղել նշանավոր կինոռեժիսոր, ծագումով քուրդ Յըլմազ Գյունեյը։ Նա հայտնում է, որ ինքը, իբրև Թուրքիայում ծնված մարդ, անտարբեր չի կարող մնալ հայերի ցեղասպանության նրկատմամբ։ Երիտթուրքերը, գրում է նա, իրենց չարամիտ ազգայնականության, պանթուրանական կայսրություն ստեղծելու ճանապարհին խոչընդոտ են համարել հայ ու քուրդ ժողովուրդներին և վճռել ֆիզիկապես ոչնչացնել նրանց։ Հայերը ենթարկվեցին զանգվածային տեղահանումների ու կոտորած-

ների և 700 000 քուրդ աքսորվեց Կենտրոնական Անատոլիայից: Այն ժամանակ հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումն էր պատճառը, թերևս, որ քեմալական ղեկավարները չփորձեցին քրդերին ենթարկել հայերի ճակատագրին, ասվում է հայտարարության մեջ: Յ. Գյունեյը ներկայացնում է քրդերի հալածական վիճակը այժմյան Թուրքիայում. ներկայումս, հայտնում է նա, երբ քրդերը ձայն են բարձրացնում իրենք իրավունքների պաշտպանության համար, թուրքական իշխանությունները նրանց սպառնում են հայերի հետ կատարվածի կրկնություն:

Այնուհետև հրապարակվել է բաց նամակ՝ ուղղված համաշխարհային հասարակայնությանը: Այն ստորագրել են մի շարք երկրների մտավորականներ (փիլիսոփաներ, պատմաբաններ, ֆիզիկոսներ և այլք), ինչպես Մ. Բենեդիկտը (Վիեննայի համալսարան), Վ. Դեկոմբը (Ջոն Հոպկինսի համալսարան), Հ. Դադամբը (Հադելբերգի համալսարան), Գ. Քրոսինգը (Վիեննայի համալսարան), Յու. Համբերմասը (Ֆրանկֆուրտի համալսարան), Կ. Հերբերտը (Վիեննայի համալսարան), Գ. Կորտյանը (Մոնրեալի համալսարան), Ս. Լուկեսը (Օբսֆորդի համալսարան), Իվ Տերնոնը (Փարիզ) և ուրիշներ: Բաց նամակում նշվում է, որ 1948 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու վերաբերյալ համաձայնագիրը դեռևս չի դրվել գործողության մեջ, քանի որ նրանով նախատեսված միջազգային քրեական դատարանը դեռևս չի կազմակերպվել: Դրան առնչվող մի այլ համաձայնագիր (ստորագրված 1968 թ. նոյեմբերին)՝ պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վրա վաղեմությունը չտարածելու մասին, չի դարձել միջազգային իրավունքի արդյունավետ միջոց: Դա նշանակում է, նշվում է բաց նամակում, որ հայերի նկատմամբ երիտթուրքական կառավարության տեղահանումների և կոտորածների քաղաքականությունը չի ճանաչվել, թեև բարոյապես դատապարտվել է ՄԱԿ-ի կողմից: Ի լրումն դրա, այդ ցեղասպանության սոսկ հիշատակումը շատ տասնամյակներ ի վեր կասեցվում է թուրքական պետության ակտիվ դիմադրության հետևանքով: Նամակի վերջում պետություններին կոչ է արվում նպաստել տարրական արդարության վերականգնմանը և աջակցել այն բանին, որպեսզի ՄԱԿ-ում ճանաչվի հայերի ցեղասպանության փաստը:

Ֆ. Ռիգոյի «Հայերի ցեղասպանությունը և Մշտական ժողովրդական դատարանը» հաղորդման մեջ խոսվում է դատարանի հիմնադրման, նրա նպատակների, դատավճռի բնույթի ու գործունեության մասին: Արժեքավորելով դատարանի դատավճիռը՝ նա նկատում է, որ դատարանը խորապես թափանցել է փաստերի մեջ և իր կայացրած դատավճռում հետևել նաև ցեղասպանության իրադարձությունների ժամանակվա միջազգային օրենքներին:

Անդրադառնալով Մշտական ժողովրդական դատարանի վճիռների գործնական նշանակությանը, Ֆ. Ռիգոն հայտնում է, որ իրենց ոչ պաշտոնական բընույթով հանդերձ, դրանք ամենևին էլ աննշմար չեն, քանի որ հարց են հարուցում կամ խթանում են պետությունների ու միջպետական հաստատությունների գործունեությունը տվյալ հարցի կապակցությամբ: Հայերի ցեղասպանությունը, նկատում է նա, տարիներ ի վեր դարձել է քաղաքական ու դիվանագիտական վեճերի առարկա, մասնավորապես ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում և նրա ենթահանձնաժողովում: Դատարանի կողմից հայերի ցեղասպանությունը դատապարտելը և թուրքական պետությանը դրանում պատասխանատու ճանաչելը, եզրափակում է նա, ցեղասպանության ենթարկված ժողովրդին գոհացում տալու առաջին ձևն է:

Հատորի վերջում հանդես է եկել Ժ. Շալյանը, որը Մշտական ժողովրդական դատարանի դատավճիռը համարում է բարոյական ու պատմական փոխհատուցման սկիզբ: Դատական նիստի կարևոր ներդրումներից մեկը համաշխարհային հասարակական կարծիքին արևմտահայերի ցեղասպանության մա-

սին հիշեցնելն է, նկատում է նա և մեջբերում Ռասելին՝ «Անհրաժեշտ է պայքարել լուրջ ճանաչագործության դեմ»:

Ժ. Շալյանը խիստ քննադատության է ենթարկում թուրքական այն հրատարակությունները, որոնք հրապարակ են նեղվել Մշտական ժողովրդական գատարանի նիստից պարզ ժամանակ անց: Այդ հրատարակությունները, նկատում է նա, թուրքական վաղուց տարածված մտացածին դրույթների տարբերակներն են 1915—1916 թթ. իրադարձությունների վերաբերյալ: Ժ. Շալյանը հերքում է, մասնավորապես, թուրքական պատմական ընկերության հեղինակային իրավունքով 1983 թ. հրատարակված Կ. Գյուրունի «Le dossier arménien» գրքի այն անհիմն պնդումները, որով արդարացվում են արևմտահայերի տեղահանումները և նվազեցվում սպանդի ենթարկված զոհերի թվաքանակը: Բնութագրելով ցեղասպանության նկատմամբ թուրքական կառավարության դիրքը, նա պրոն է, որ ներկայումս թուրքիայում հասարակական կարծիքը ընկրճված է ծայրահեղ աղտոյնական պրոպագանդի ներքո, որ այնտեղ դատապարտվում են աղատ հետազոտությունները և դոգմաներից շեղվող քննադատական ոգին: Այս պայմաններում, եզրակացնում է Ժ. Շալյանը, թուրքական պետությունը հազիվ թե վերանայի իր ավանդական դիրքը ցեղասպանության նկատմամբ:

Միջազգային ժողովրդական դատարանի կողմից 1984 թ. ապրիլին փառիզում կազմակերպված դատավարությունը, նվիրված արևմտահայության 1915—1916 թթ. ցեղասպանությանը, անկասկած, ունեցավ բարոյական ու բաղադրական մեծ նշանակություն: Այն ցույց տվեց, որ հակառակ թուրքական կառավարության ջանքերի, միջազգային հասարակական կարծիքը մի անգամ ևս անվերապահորեն ընդունում է հայերի ցեղասպանության փաստը Օսմանյան կայսրության մեջ և պահանջում է, որ այն ընդունվի նաև ՄԱԿ-ի և բոլոր պետությունների կողմից:

МЕЖДУНАРОДНОЕ ОБЩЕСТВЕННОЕ МНЕНИЕ О ГЕНОЦИДЕ ЗАПАДНЫХ АРМЯН

М. Г. НЕРСИСЯН, А. А. ХАРАТЯН

Резюме

В статье рассматриваются материалы Постоянного народного суда, состоявшегося с 13 по 16 апреля 1984 г. в Париже и посвященного геноциду западных армян. Судебный процесс имел моральное значение и преследовал цель выяснить историческую реальность геноцида армян. Состав суда имел широкую международную представительность, в его заседаниях участвовали видные представители зарубежной прогрессивной интеллигенции, деятели международных организаций борцов за мир, юристы, арменоведы и др. Суд еще раз подтвердил исторический факт геноцида армян в Османской империи в 1915—1916 гг., организованного главарями младотурецкого правительства. В материалах суда на основании многочисленных документов и свидетельств обличались турецкие историки и политики и их приспешники, которые стремятся отрицать геноцид армян и стереть эту величайшую трагедию из исторической памяти народов. Материалы судебного процесса напечатаны отдельными книгами на французском и английском языках в 1984 и 1985 гг.